

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ -1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ

Տարեկան հաշվետվություն

2009թ

Հասցե ք.Երևան 0023, Արշակունյաց փ, 12

Հեռախոս . 52-53-21

Ֆաքս 52-57-13

Էլփոստ Info@yerjewel.com

Ինտերնետ կայք www.yerjewel.com

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

| | |
|---|----|
| Կառավարման մարմինների տարեկան զեկույց | -1 |
| Ընկերության գործունեության վերաբերյալ տեղեկություններ | -1 |
| Ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ | -2 |
| Ընկերության կառավարման մարմինների վերաբերյալ տեղեկություններ | -5 |
| Ընկերության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը | -5 |
| Կառավարման մարմինների հայտարարություն | -6 |
| Անկախ աուդիտորական եզրակացություն | |
| Տարեկան ֆինանսական հաշվետվություն | |

Կառավարման մարմինների տարեկան զեկույց

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ն զբաղվում է ոսկերչական իրերի, ժամացույցների, պետական մեդալների, շքանշանների, հուշամեդալների արտադրությամբ: Լինելով երկրում ամենախոշոր ձեռնարկություններից մեկը՝ վերջինս արտադրում էր ոսկյա և արծաթյա իրեր ավելի քան հազար տեսակ:

Ընկերությունն ունի շքանշանների, մեդալների, հուշամեդալների և «ԳՆՈՄՈՆ» ֆիրմային ոսկյա ժամացույցների արտադրական գործունեությունը բարեհաջող իրականացնելու համար անհրաժեշտ հարմարությունները: Ընդլայնման ծրագրի համար Ընկերությունը լրացուցիչ արտադրական հարմարություններ հիմնելու կարիք ունի: Ներկայումս արտադրությունը իրականացվում է հիմնական և հարակից արտադրամասերում, թանկարժեք մետաղների հալման հոսքագծերով և այլ մեքենաներով:

Ընկերության շքանշանների, մեդալների, ոսկյա հուշամեդալների և «ԳՆՈՄՈՆ» ֆիրմային ոսկյա ժամացույցների արտադրանքի հիմնական մասը իրացվում է ներքին շուկայում և արտահանվում է ԱՊՀ երկրներ, Միջին Ասիա, Գերմանիա, մնացած մասը այլ երկրներ:

Ընկերության ներկայիս տարեկան արտադրական հզորությունն է 50000 – 60000 հատ շքանշաններ, մեդալներ, հուշամեդալներ և 10000 հատ «ԳՆՈՄՈՆ» ֆիրմային ոսկյա ժամացույցներ, ներառյալ թանկարժեք և կիսաթանկարժեք քարերով:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ոսկու գնի կտրուկ տատանումների հետևանքով ռիսկերի կառավարման հնարավորությունը նվազում է, որի արդյունքում ոսկերչական իրերի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների շրջանակը կտրուկ նվազում է: Սակայն ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ն հենվելով հզորությունների և ճշգրիտ սարքավորումների տեխնիկական հզորությունների վրա, կատարում է կոնստրուկտորատեխ-նոլոգիական մշակման, նոր ոսկերչական իրերի ստեղծման և արտադրությունում ներդնելու ուղղությամբ աշխատանքներ՝ միաժամանակ ապահովելով շուկայի մարկետինգային ուսումնասիրություններ և նոր գնորդների հայտնաբերում:

Ընկերության նպատակն է 2010 թվականի և հաջորդ տարիների ընթացքում նշված հզորությունների առավելագույն օգտագործմամբ նվազեցնել արտադրական ծախսերը, կրճատել աշխատատեղությունը, փոփոխել արտադրական կառուցվածքը, որոնց շնորհիվ իջեցնել արտադրանքի ինքնարժեքը՝ ապահովելով բարձր շահութաբերություն:

Ընկերության գործունեության հիմքը մարքետինգային, գովազդային, ոսկերչական իրերի դիզայնի և տեխնոլոգիաների մշակումն է, մոդելների և փորձնական նմուշների պատրաստումն է, ապրանքների կայուն իրացման ապահովումը, արտադրության շուկայական կողմնորոշումն է:

Ընկերության գործունեության վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝ պերճանքի առարկաների, ոսկերչական իրերի և թանկարժեք զարդեղենի, ժամացույցների, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, կիսաֆաբրիկատների արտադրություն և վաճառք:

Ընկերության արտադրության ուղղություններն են.

- ոսկերչական իրերի պատրաստում և վաճառք;
- ոսկյա ժամացույցների(նաև թանկարժեք քարերով) պատրաստում և վաճառք;
- թանկարժեք և գունավոր մետաղներից մեդալների, շքանշանների, հուշամեդալներ ոսկուց, արծաթից, հուշադրամների պատրաստման պատվերների կատարում;
- ոսկերչական արտադրության սարքավորումների, հանդերձանքի, գործիքների պատրաստում և վաճառք;
- ծառայությունների մատուցում ;

Ներքին շուկայում Ընկերության հիմնական մրցակիցներն են հանդիսանում ոսկու վաճառքով

զբաղվող խոշոր խանութները անհայտ տեսականիով, ինչպես նաև Երևան քաղաքի տարբեր շրջաններում տեղաբաշխված ոսկու շուկաները: Մրցակիցների կողմից մրցակցության հիմնական միջոցներ են հանդիսանում ստվերային աշխատանքները և արդյունքում ցածր գները և ակտիվ գովազդը:

Ընկերության գործունեության վրա հնարավոր է բացասական ազդեցություն ունենալ.

Գների կտրուկ փոփոխությունը

Համաշխարհային շուկայում ոսկու գների կայունության դեպքում ազգային տարադրամի շարունակական արժևորումը

Մարքեթինգային ուսումնասիրությունների ոչ բավարար լինելը՝ ոսկու հումքի շուկայի բացակայությունը Հայաստանի Հանրապետությունում, անիմաստ ստուգումներ, հաշվառման բարդացում, որը բերում է ինքնարժեքի կտրուկ աճի:

Ամենակարևորը - դա ավանդական շուկաների պահպանումն է և նոր շուկաների հայթայթումն է: Սրա հետ կապված կուզենայի նշել, որ արտադրողները առևտրային ցանցին ոսկերչական իրերը որպես կանոն տրամադրում են վճարման տարեկետման իրավունքով, սա առավել ակտուալ է ներկայիս ֆինանսատնտեսական իրավիճակում:

Եվ իհարկե, բոլոր դեպքերում, շուկայական տնտեսության պայմաններում, պետք է կարողանանք բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, ապահովել ֆինանսական ներդրումների բարձր արդյունավետությունը, աշխատել խնայողաբար, ուստի միայն այս դեպքում կկարողանանք կյանքի կոչել մեր բոլոր պլանները:

Ընկերության արտադրանքի արտահանման հիմնական միջոցներն են.

- 1/ Ավիատոլիները
- 2/ Սուրհանդակային ծառայությունները
- 3/ Բեռնափոխադրող կազմակերպությունները:

Ստորև բերվում է Ընկերության արտադրանքի թողարկման և իրացման ծավալների դինամիկան (հազ.դրամ) վերջին երեք տարում:

| Արտադրանքի թողարկում | | | Արտադրանքի իրացում | | |
|----------------------|-----------|-----------|--------------------|-----------|-----------|
| 2007թ. | 2008թ. | 2009թ. | 2007թ. | 2008թ. | 2009թ. |
| 1.074.139 | 1.656.708 | 1.596.235 | 2.432.409 | 1.260.707 | 1.274.766 |

Ընկերության արտադրանքի իրացման 55.95 % կատարվել է արտաքին շուկայում, իսկ 44.05 %՝ ներքին շուկայում:

Ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ

Ամփոփ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (հազ.ՀՀ դրամ)
2009թ.

Աղյուսակ 1

| Ցուցանիշի անվանումը | 2009թ. |
|--|-----------|
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառ-ի իրացումից հասույթ | 1274766 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառ-ի ինքնարժեք | (1050391) |
| Համախառն շահույթ (վնաս) | 224375 |
| Իրացման ծախսեր | (38921) |
| Վարչական ծախսեր | (83662) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառ-իրացումից շահույթ (վնաս) | 101792 |

| | |
|---|----------|
| Գործառնական այլ եկամուտներ | 330101 |
| Գործառնական այլ ծախսեր | (277789) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 154104 |
| Ֆինանսական ծախսեր | (13258) |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս) Ընդհատվող գործառնությանը վերագրելի ո | - |
| Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս) | - |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս) | 4394 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 145240 |
| Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս) | - |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 145240 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | (30968) |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 114272 |

Ամփոփ Հաշվապահական Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ (հազ.ՀՀ դրամ)

Աղյուսակ 2

| Ցուցանիշի անվանումը | 2009թ. |
|--|---------------|
| Հիմնական միջոցներ | 1492401 |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 44362 |
| Ոչ նյութական ակտիվներ | 16323 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | - |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 76 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 48888 |
| <i>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</i> | 1602050 |
| Պաշարներ | 1601429 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 42483 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 1170144 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 65370 |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | - |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 56314 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 7586 |
| <i>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</i> | 2943326 |
| <i>Ընդամենը ակտիվներ</i> | 4545376 |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 1095340 |
| Էմիսիոն եկամուտ | - |
| Կուտակված շահույթ | 110883 |
| Պահուստային կապիտալ | 14246 |
| Սեփական կապիտալի այլ տարրեր | 711412 |
| <i>Ընդամենը սեփական կապիտալ</i> | 1931881 |
| Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 89303 |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ | - |
| <i>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</i> | 89303 |
| Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 20526 |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 2450856 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 24183 |

| | |
|---|---------|
| Այլ կրեդիտորական պարտքեր | 19381 |
| Այլ ընթացիկ պարտավորություններ | 9246 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 2524192 |
| Ընդամենը պարտավորություններ | 2613495 |
| Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ | 4545376 |

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ տվյալներ դեկտեմբերի 31-ի դրությամբ
(հազ.ՀՀ դրամ) Աղյուսակ 3

| | |
|---|---------------|
| Ցուցանիշի անվանումը | 2009թ. |
| Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին | 12939 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 115909 |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | (3943) |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | (70979) |
| Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին | 56314 |

Ֆինանսական կայունության վերլուծություն

1. **Ֆինանսական անկախության գործակիցը** ցույց է տալիս, թե ընկերության ընդհանուր ջոցների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի հաշվին: Այլ կերպ, այն սեփական կապիտալի տեսակարար կշիռն է կազմակերպության ընդհանուր կապիտալում:

$$q_1 = \frac{\text{Սեփական կապիտալ}}{\text{Հաշվեկշռի հանրագումար}} = \frac{1931881}{4545376} = 0,43$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 0.5:

2. **Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակիցը** իր իմաստով մոտ է նախորդ գործակցին և ցույց է տալիս, թե սեփական կապիտալի միավորի հաշվով որքան պարտավորություններ ունի կազմակերպությունը:

$$q_2 = \frac{\text{Պարտավորություններ}}{\text{Սեփական կապիտալ}} = \frac{2613495}{1931881} = 1,35$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 1:

4. **Գործող կապիտալ:** Այն ցույց է տալիս, թե ընթացիկ ակտիվների, որ մասն է ապահովված սեփական կապիտալով և երկարաժամկետ պարտավորություններով կամ երկարաժամկետ հիմունքներով ներգրավված միջոցների որ մասն է ուղղված ընթացիկ ակտիվների ֆինանսավորմանը:

$$q_4 = \text{Ընթացիկ ակտիվներ} - \text{Կարճ պարտավորություններ} = 2943326 - 2524192 = 419134$$

5. **Ընթացիկ ակտիվների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից:** Այն ցույց է տալիս, թե ընկերության ընթացիկ ակտիվների, որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և երկարաժամկետ պարտավորությունների հաշվին:

$$q_5 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Ընթացիկ ակտիվներ}} = \frac{2021184}{2943326} = 0,69$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0,1:

6. **Պաշարների գործող կապիտալով ապահովվածության գործակից:** Այն ցույց է տալիս ընկերության ապրանքանյութական պաշարների, որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և երկարաժամկետ պարտավորությունների հաշվին:

$$Q6 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Պաշարներ}} = \frac{2021184}{1601429} = 1.26$$

7. **Սեփական կապիտալի մանրայնության գործակից:** Այն ցույց է տալիս, թե ընկերության սեփական կապիտալի հաշվին ձևավորված միջոցների, որ մասն է գտնվում շարժունակ (մոբիլ) վիճակում:

$$Q7 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Սեփական կապիտալ}} = \frac{2021184}{1931881} = 1,04$$

**Հաշվեկշռի իրացվելիության վերլուծությունը
Իրացվելիությունը բնութագրող ցուցանիշներն են.**

1. **Ընթացիկ իրացվելիության գործակից:** Այն ցույց է տալիս ընկերության կարճաժամկետ պարտավորությունների ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը և որոշվում է ընթացիկ ակտիվների և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությամբ:

$$Q8 = \frac{\text{Ընթացիկ ակտիվներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}} = \frac{2943326}{2524192} = 1.17$$

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը 2 է:

ՇՐՋԱՆԱՈՒՄ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. **Ակտիվների շրջանառության գործակից:** Այս ցուցանիշը բնութագրում է համախառն ակտիվների շրջանառության արագությունը:

$$Q10 = \frac{\text{Արտադրանիքի իրացումից հասույթ}}{\text{Ակտիվների միջին մեծություն}} = \frac{1274766}{4467240} = 0.28$$

2. **Ընթացիկ ակտիվների շրջանառության գործակից:** Այս ցուցանիշը բնութագրում է ընթացիկ ակտիվների շրջանառության արագությունը:

$$Q11 = \frac{\text{Արտադրանիքի իրացումից հասույթ}}{\text{Ընթացիկ ակտիվների միջին մեծություն}} = \frac{1274766}{2820298} = 0.45$$

Հարկային պարտավորություններ 09թ. ԵՈԳ -1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ

| | մն.01.01.09թ. | հաշվ. | վճար. | մն.31.12.09թ. |
|------------------|---------------|----------|----------|---------------|
| ԱԱՀ | 5 345,7 | 51 624,3 | 51 280,0 | 5 690,0 |
| Եկամտահարկ | (1642,9) | 16 061,0 | 16 589,8 | (2 171,7) |
| Շ/հ 1% կանխավճար | 0,0 | 17 298,8 | 17 298,8 | 0,0 |
| Գույքահարկ | 0,0 | 740,8 | 740,8 | 0,0 |

| | | | | |
|---------------------|---------|-----------|-----------|---------|
| Ընդամենը | 3 702,8 | 85 724,9 | 85 909,4 | 3 518,3 |
| Սոցապ վճար | 2594,5 | 31 008,5 | 31 058,3 | 2544,7 |
| Այլ հարկեր, տուրքեր | 0,0 | 350,0 | 350,0 | 0,0 |
| Հողի հարկ | 0,0 | 259,7 | 259,7 | 0,0 |
| Բնապահպ. | 13,4 | 26,7 | 34,5 | 5,6 |
| Տույժ.տուգանք | 0,0 | 3995,0 | 3995,0 | 0,0 |
| Ընդամենը | 13,4 | 4 631,4 | 4 639,2 | 5,6 |
| Ամբողջը | 6 310,7 | 121 364,8 | 121 606,9 | 6 068,6 |

Ընկերությունը բյուջեյի, սոցապի նկատմամբ պարտավորությունները կատարում է ժամանակին:

Ընկերության կառավարման մարմինների վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության կանոնադրությամբ սահմանված Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը և Ընկերության գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը: Ընկերության կառավարմանը մասնակցող անձինք են՝ էմիլ Գրիգորյանը (գլխավոր տնօրեն), Վահան Խաչատրյանը (գլխավոր հաշվապահ):

Ընկերության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը

Տեղեկություններ Ընկերության նախատեսվող գործունեության վերաբերյալ:

2011 թվականին նախատեսվող աշխատանքներ.

- 63 նոր ոսկերչական իրերի մշակում և արտադրություն,
- 3 նոր ժամացույցների մոդելների (ռուսական և շվեյցարական մեխանիզմների բազայի վրա) արտադրություն,
- 48 - 75 տիպի հորեյլանական մեդալների, հուշամեդալների, պետական շքանշանների և մեդալների արտադրություն.

Ընկերության արտադրանքի սպառման հիմնական շուկաներն են հանդիսանում՝

- Ռուսաստանի Դաշնություն , Ղազախստան, Մոլդովա
- Գերմանիա
- Թուրքմենիա
- ԱՄՆ

Ընկերության նպատակն է ներկայացվող ծրագրի միջոցով պետական և գերատեսչական շքանշանների, մեդալների, հուշամեդալների, ինչպես նաև պետական այլ կառույցների կողմից թողարկվող դրամանիշերի ու հուշամեդալների իրացման շրջանառությունը հասցնել ներքին շուկայի պահանջարկի մինչև 85 %-ը, իսկ ոսկյա ժամացույցների՝ 65 %-ը:

Ընկերությունը նախատեսում է շքանշանների, մեդալների, հուշամեդալների, հուշանվերների և «ԳՆՈՄՈՆ» ֆիրմային ժամացույցների արտադրության բոլոր տեղամասերը տեղափոխել մեկ շենք, որը կապված է այս արտադրության առանձնահատկությունների հետ: Ծրագրի իրականացումը նախատեսված է ավարտել երկու տարվա ընթացքում:

Ընկերությունը ուսումնասիրել է անհրաժեշտ սարքավորումների պահանջը և առաջարկը, և որոշում է կայացրել գնելու Իտալական, Գերմանական և Բելգիական արտադրության լավագույն սարքերը: Մնացած սարքավորումները արդեն առկա են գործարանում և շահագործման մեջ են:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:

14 ապրիլի 2010թ.

Էմիլ Գրիգորյան

Գլխավոր տնօրեն

Վահան Խաչատրյան

Գլխավոր հաշվապահ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ -1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ կողմից հրապարակված տեղեկությունների մասին

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ -1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ ինտերնետային կայքում հրապարակել է 2008թ. տարեկան հաշվետվությունը, 2009թ.եռամսյակային միջանկյալ հաշվետվություններ, 2009թ.միջանկյալ ընթացիկ հաշվետվություններ, 2009թ. տարեկան հաշվետվությունը:



BAKER TILLY ARMENIA

22 Hanrapetutyán Street,
Area 16, 5th floor
0010 Yerevan
Republic of Armenia
Tel: +374(10) 582-487
Tel: +374(10) 582-478
Fax: +374(10) 562-404
www.bakertillyarmenia.com
Email: info@bakertillyarmenia.com

14 Ապրիլ 2010

N 16210

Հ Ա Ս Տ Ա Տ ՈՒ Մ Ե Մ



ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Երևանի ոսկերչական գործարան – 1 «Գնումն» Բաց Բաժնետիրական Ընկերության Բաժնետերերին

Մենք անկախ աուդիտի ենք ենթարկել Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնումն» Բաց Բաժնետիրական Ընկերության 31 դեկտեմբեր 2009թ. դրությամբ տարեկան հաշվապահական հաշվեկշիռը, ինչպես նաև՝ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները: Այս ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի ստանդարտներին (աուդիտի ազգային ստանդարտներին և գործնական փորձին) համապատասխան: Համաձայն այդ ստանդարտների պահանջով է, որ մենք աուդիտը նախագծենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների և բացահայտումների բաղադրիչների հետազոտումը՝ թեսային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, ընկերության ղեկավարության կողմից իրականացվող կառավարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների ընթացքում հավաքագրվել են բավարար և իրական տեղեկություններ, որոնց արդյունքները հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

Մեր կարծիքով, 2009թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը, ինչպես նաև՝ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը ընկերության ֆինանսական վիճակի մասին, իսկ հաշվապահական հաշվառումը Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» Բաց Բաժնետիրական Ընկերությունում վարվում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջներին և հաշվապահական հաշվառման կանոններին համապատասխան:

Առաջադրված

Մ.Մ. Կարսյան



Առաջին Մկրտչյան